Է/փ ելք 251 /ՕԳՎ
06.02.2026թ.

ՀՀ ՊՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Վ. ՄԱՀՏԵՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մահտեսյան,

Ի պատասխան Ձեր 30.01.2026թ. ելք 158 գրության, Ձեզ է ուղարկվում «Արմոս» ՍՊ ընկերության միջև 2025 թվականի հունիսի 6-ին ՓՊՄԱՊՁԲ-25-7/15-1 ծածկագրով կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում մատակարարված «Կոշիկ՝ ճտքավոր» ապրանքատեսակի (այսուհետ՝ Ապրանքատեսակ) ընդունման գործընթացի ժամանակ հանրային հսկողություն սահմանող անձի՝ «Գառու գրուպ» ՍՊ ընկերության վերաբերյալ տեղեկագրում հրապարակվելիք հայտարարության բովանդակությունը.

Պայմանագրի շրջանակներում «Արմոս» ՍՊ ընկերության կողմից 2025թ. դեկտեմբերի 15-ին, 16-ին, 22-ին և 24-ին մատակարարված Ապրանքատեսակի մասով «Գառու գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել են հետևյալ նկատառումները.

- ***Նկատառում:*** Կոշկերեսը (երեսացուն) բաղկացած է ամբողջական առաջամասից (քթամաս, կողային հատվածներ և կրնկամաս, այսուհետ՝ առաջամաս):

Չի պահպանվել առաջամասն ամբողջական լինելու պահանջը, բացակայում է կրնկամասի հատվածը:

Պարզաբանում: Դիտարկմամբ ներկայացվում է ճտքավոր կոշիկի ընդհանուր արտաքին կառուցվածքը, ուստի, համաձայն պայմանագրին կից տեխնիկական բնութագրի 3-րդ պարբերության, կոշկերեսի ամբողջական առաջամասը մշակված է քթամասից ***մինչև կրնկամաս,*** այսինքն՝ տեխնիկական բնութագրով յուրաքանչյուր դետալի մասով ներկայացվում են առանձին պահանջներ, հետևաբար՝ ներկայացված նկատառումն անհիմն է:

- ***Նկատառում:*** Հիմնական ներդիրի վերնամասին պետք է սոսնձված լինի առնվազն 120 գ/մ^2 մակերեսային խտությամբ, շնչող, ոչ հյուսված պոլիամիդային մանրաթելից բաղկացած կամբրելլա տեսակի գործվածք:

Չի պահպանվել պահանջը՝ շնչող, ոչ հյուսված պոլիամիդային գործվածքի փոխարեն օգտագործվել է ավելի ցածր խտությամբ /նաև արժեքով/ հյուսված մանրաթելից գործվածք:

Պարզաբանում: Ներկայացված սերտիֆիկատում առկա է գրառում այն մասին, որ հիմնական ներդիրի վերնամասին սոսնձված կտորը հանդիսանում է 120 գ/մ^2 մակերեսային խտությամբ քեմբրել տեսակի ոչ հյուսված ծածկույթ, հետևաբար՝ նկատառումն անհիմն է:

- ***Նկատառում:*** Հանովի-դնովի անատոմիական (և/կամ օրթոպետիկ) ներդիրը բաղկացած է միմյանց սոսնձված երկու կամ երեք շերտից, (ընդ որում՝ առաջին և երրորդ շերտը պարտադիր է): Առաջին շերտը բաղկացած է առնվազն 150 գ/մ^2 մակերեսային խտությամբ շնչող ոչ հյուսված պոլիամիդային մանրաթելից բաղկացած կամբրելլա տեսակի գործվածքից, հաստությունը՝ 2.0-2.4 մմ, 2-րդ շերտը՝ 0.08-0.1մմ հաստությամբ ալյումինե փայլաթիթեղից, 3-րդ շերտը՝ 750-800 գ/մ^2 մակերեսային խտությամբ 60-70% պոլիէսթեր և 30-40% պոլիպրոպիլեն նյութից, հաստությունը՝ 2.2-2.5 մմ, ընդհանուր հաստությունը՝ 4.4-5.0 մմ:

Չի պահպանվել կամբրելլա տեսակի գործվածքի հաստությունը:

Չի պահպանվել պոլիէսթեր և պոլիպրոպիլեն նյութերի օգտագործման պահանջը և դրա փոխարեն օգտագործված է այլ նյութ:

Պարզաբանում: Ներկայացված սերտիֆիկատում առկա է գրառում այն մասին, որ հանովի-դնովի ներդիրի առաջին շերտը պատրաստված է 150 գ/մ^2 մակերեսային խտությամբ և 2.4 մմ հաստությամբ քեմբրել տեսակի ոչ հյուսված ծածկույթից, իսկ 3-րդ շերտը բաղկացած է 750 գ/մ^2 մակերեսային խտությամբ, 70% պոլիէսթեր և 30% պոլիպրոպիլեն նյութից, հաստությունը կազմում է 2.2 մմ, հետևաբար՝ նկատառումն անհիմն է:

- ***Նկատառում:*** Քթամասը՝ կոշտ, որը կաշվի ներսի հատվածից մշակվում է 2.2-2.6 մմ հաստությամբ պլաստիկ նյութով, որի վրայից մշակված է 0.2-0.3 մմ հաստությամբ սպունգ, իսկ դրա վրայից էլ մշակվում է առնվազն 120 գ/մ^2 մակերեսային խտությամբ բյազ կամ գաբարդին կամ կամբրելլա տեսակի գործվածքներից:

Չի պահպանվել պահանջը, մասնավորապես՝ բացակայել է պլաստիկ նյութի ծածկույթի բաղադրիչներից մեկի՝ սպունգի կամ գործվածքի օգտագործումը:

Պարզաբանում: Ներկայացված սերտիֆիկատում առկա է գրառում այն մասին, որ քթամասի պլաստիկ նյութի հաստությունը կազմում է 2.3 մմ, սպունգային նյութը կազմում է 0.2 մմ, իսկ դրա վրա առկա է 120 գ/մ^2 մակերեսային խտությամբ բյազ տեսակի գործվածք, հետևաբար՝ նկատառումն անհիմն է:

- ***Նկատառում:*** Կրնկամասը՝ կոշտ, որը կաշվի ներսի հատվածից մշակվում է 2.6-3.0 մմ հաստությամբ պլաստիկ նյութով, որի վրայից մշակված է 0.2-0.3 մմ հաս-

տությամբ սպունգ, իսկ դրա վրայից էլ մշակվում է առնվազն 120 գ/մ^2 մակերեսային խտությամբ բյազ կամ գաբարդին կամ կամբրելլա տեսակի գործվածքներից:

Չի պահպանվել պահանջը, մասնավորապես՝ բացակայել է պլաստիկ նյութի ծածկույթի բաղադրիչներից մեկի՝ սպունգի կամ գործվածքի օգտագործումը:

Պարզաբանում: Ներկայացված սերտիֆիկատում առկա է գրառում այն մասին, որ կրնկամասի պլաստիկ նյութի հաստությունը կազմում է 2.7 մմ, սպունգային նյութը կազմում է 0.2 մմ, իսկ դրա վրա առկա է 120 գ/մ^2 մակերեսային խտությամբ բյազ տեսակի գործվածք, հետևաբար՝ նկատառումն անհիմն է:

- ***Նկատառում:*** Կոշիկի ճտքերը մշակվում են առաջամասի ոտնաթաթի կոճի վերին եզրից դեպի վերև, սակայն ընդհանուր ճտքերի բարձրությունը չափվում է ներբանի վերին եզրից, 40-43 միջին չափսի համար՝ ներբանից մինչև ճտքերի վերին եզրը 20-21 սմ, մնացած չափսերի շեղումը՝ ±3.0 մմ:

Չի պահպանվել պահանջը, քանի որ ճտքերը մշակված են ոտնաթաթի կոճից ցածր:

Պարզաբանում: Համաձայն պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջների՝ առաջամասը մշակված է քթամասից մինչև կրնկամաս և դրա բարձրությունը պետք է լինի ներբանից մինչև ոտնաթաթի սրունք-թաթային հոդի դրսային և ներսային ոտնաթաթի կոճի միջին բարձրությամբ, ուստի ճտքերի սահմանված բարձրությունները պահպանված են, հետևաբար՝ նկատառումն անհիմն է:

- ***Նկատառում:*** Ներբանի գետնին հպվող շերտի երկայնական կտրվածքի հաստությունը 5.0-6.0մմ է:

Չի պահպանվել պահանջը, քանի որ հաստությունը ավելի քիչ է սահմանվածից:

Պարզաբանում: Ներկայացված սերտիֆիկատում առկա է գրառում այն մասին, որ ներբանի գետնին հպվող շերտի երկայնական կտրվածքի հաստությունը կազմում է 5.0 մմ, հետևաբար՝ նկատառումն անհիմն է:

h.1772903 գրությամբ անդրադարձ է կատարվում նաև Ապրանքատեսակն ընդունող ՊՆ ներկայացուցիչների աշխատանքին, որի վերաբերյալ հայտնում եմ, որ վերջիններս ընդունման աշխատանքներն իրականացրել են ՀՀ պաշտպանության նախարարի 2019 թվականի փետրվարի 22-ի №177 հրամանի պահանջների համաձայն:

Քանի որ Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջների համաձայն՝ Ապրանքատեսակը բնութագրող գրեթե բոլոր բաղադրիչների մասով փորձագիտական լաբորատորիայի կողմից պետք է տրամադրվեր փորձարկման գրավոր

եզրակացություն, հետևաբար՝ ՊՆ ներկայացուցիչների կողմից իրականացվել է Ապրանքատեսակի արտաքին զննություն, այդ թվում նաև գրությամբ մատնանշված քուղերի երկարության և ճտքերի բարձրության չափումներ, իսկ օժանդակ այլ զննություններ չեն իրականացվել:

Ինչ վերաբերում է 2400 զույգ խմբաքնակի մասով լաբորատորիայի կողմից տրված փորձարկման եզրակացության մեջ որոշ ցուցանիշներ ներառված չլինելու նկատառմանը՝ հայտնում եմ, որ դրանք ներառված են «Արմոս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Ապրանքատեսակի որակի համապատասխանության վերաբերյալ սերտիֆիկատում, ուստի Պայմանագրին կից տեխնիկական բնութագրում առկա է հստակ դրույթ այն մասին, որ այն բոլոր ցուցանիշների վերաբերյալ, որոնց մասով փորձագիտական լաբորատորիայի կողմից փորձարկման եզրակացություն չի տրվել, թույլատրվում է ներկայացնել նաև որակի համապատասխանության վերաբերյալ սերտիֆիկատ:

Ապրանքատեսակի լաբորատոր փորձարկումն այլ մասնագիտացված փորձագիտական կենտրոնին պատվիրակելու նկատառման վերաբերյալ հայտնում եմ, որ Ապրանքատեսակի՝ Պայմանագրին կից տեխնիկական բնութագրում ամրագրված է նաև դրույթ այն մասին, որ մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված լաբորատորիայի կողմից տրված փորձագիտական եզրակացություն, իսկ տվյալ պարագայում Պայմանագրին կից տեխնիկական բնութագրի պահանջը բավարարված է:

Վերոնշյալի համատեքստում հետագայում նմանատիպ դեպքերից հնարավորինս զերծ մնալու նպատակով՝ առաջարկում եմ նաև հիմք ընդունել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ ենթակետը և «Գառու գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչներին զրկել Պայմանագրի շրջանակներում մատակարարվող Ապրանքատեսակների ընդունման գործընթացի ժամանակ հանրային հսկողություն իրականացնող անձ և/կամ անձինք լինելու լիազորությունից:

Հարգանքով՝

ՀՀ ՋՈՒ ԳՇ ՕՊԵՐԱՏԻՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
գնդապետ Ս. ՋՈՀՐԱԲՅԱՆ

ՄՈՒՏՔԱԳՐ № 1/ 708
«09» 02 2026 Թ.
Թերթերի թիվը
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն